

Հաւատացելոց ամենամեծ գայթակղութեամբը  
 Թուրքերու մատնած էր այն մեր սիրելի որդին  
 Զաքարիան՝ իբր լրտես Պարսից թագաւորին  
 կողմանէ ղրկուած՝ պատերազմը վերանորոգելու  
 համար: Յիրաւի յոյժ կը սիրենք Զաքարիան  
 որովհետեւ մեր քով եղած ատենը ուղղամու-  
 թեան ու առաքինութեան այնպիսի ապացոյցներ  
 տուաւ մեզ, որ արժանապէս ու մեծապէս յինքն  
 գրաւեց մեր հայրական սէրը: Բաց աստի, աս-  
 տուածային ողորմութեան վրայ վստահելով կը  
 յուսանք որ հոգ բնակող Հայոց եկեղեցւոյն  
 համար իր վարչութիւնը շատ յարմար պիտի  
 ըլլայ, մանաւանդ անոնց՝ Սուրբ Առաքելական  
 Աթոռոյ հետ միութիւնը պահպանելու: Անոր  
 համար այն ամէն բանի մէջ որ մեզի կարելի  
 պիտի ըլլայ, սրտագին կը փափաքինք նպաստել  
 իրեն եւ որովհետեւ կը ծանուցանէ մեզ որ քու  
 պաշտպանութիւնդ շատ կարեւոր է իրեն, ոյր  
 վասն քու Ազնուութենէդ ազդուօրէն կը խնդրենք  
 որ մեզի արտաքոյ կարգի սիրելի եղող այս մեր  
 զաւակը, մեր անձին ի մեծարանս, հովանւոյդ  
 ներքեւ առնուս եւ անոր պաշտպանութիւնն ու  
 ապահովութիւնը ստանձնես, այնպէս որ քու  
 օգնութեանդ ու ճոխութեանդ վրայ ապաւինե-  
 լով յակաստանի եւ ի խաղաղութեան կարենայ  
 սպասաւորել իր եկեղեցւոյն: Այս գործին մէջ  
 քու առ մեզ ունեցած որդիական մեծարանաց  
 ամենահաճելի մէկ ծառայութիւնը մատուցած  
 պիտի ըլլաս, որ եւ վայել պիտի ըլլայ քու բա-  
 րեպաշտութեանդ ու կրօնասիրութեանդ եւ զօր